

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հ-ում 2022թ. մարտի 7-ից 13-ը դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

Մարտի 8-ին առանձին շրջաններում, 9-13-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ: Տեղումների առավելագույն գումարային քանակը կազմել Ապարան լճայինում՝ 66մմ, Հրազդանում՝ 58մմ, Սեմյոնովկայում՝ 54մմ, Ամասիայում, Ջերմուկում՝ 52-51մմ, Տաշիրում, Ֆանտանում՝ 49-50մմ, Ստեփանավանում՝ 43մմ, Սևանում, Աշոցքում՝ 35-36մմ, Վանաձորում, Օձունում՝ 32մմ: Մնացած շրջաններում տեղումների գումարային քանակը կազմել է մինչև 15-23մմ, (Արարտյան դաշտում՝ 2-12 մմ): Մարտի 7-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը մարտի 7-ին մոտ է եղել նորմային՝ դրական և բացասական շեղումներով: Մարտի 8-11-ին բարձր է եղել նորմայից 1-4 աստիճանով (Լոռիում, Տավուշում, Սյունիքում ցածր է եղել 1-3 աստիճանով): Մարտի 12-13-ին ցածր է եղել նորմայից 2-6 աստիճանով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Սյունիքում՝ հովիտներում՝ +16...+20°C, նախալեռներում՝ +6...+11°C, Արարատյան դաշտում՝ +14...+17°C, Արմավիրում՝ +14°C, Վայոց ձորում՝ նախալեռներում՝ +14°C, լեռներում՝ +5°C, Արագածոտնում՝ նախալեռներում՝ +5...+10°C, լեռներում՝ 0...+4°C, Տավուշում՝ +10...+11°C, Լոռիում՝ +6...+10°C, Կոտայքում՝ նախալեռներում՝ +9°C, լեռներում՝ +4...+5°C, Շիրակում՝ +2...+7°C (Աշոցքում՝ 0°C), Գեղարքունիքում՝ +3...+6°C (Սեմյոնովկայում՝ 0°C), Երևանում՝ +11...+14°C:

Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Գեղարքունիքում՝ -12...-15°C (Շորժայում՝ -8°C), Արագածոտնում՝ լեռներում՝ -10...-14°C, նախալեռներում՝ -3...-6°C, Կոտայքում՝ լեռներում՝ -8...-13°C, նախալեռներում՝ -4°C, Վայոց ձորում՝ լեռներում՝ -12°C, նախալեռներում՝ -2°C, Շիրակում՝ -10...-12°C (Աշոցքում՝ -20°C), Սյունիքի հովիտներում՝ 0...-2°C, նախալեռներում՝ -10...-12°C, Լոռիում՝ -6...-9°C (Տաշիրում՝ -18°C, Ստեփանավանում՝ -14°C), Տավուշում՝ -4...-9°C, Արմավիրում՝ -2°C, Արարատյան դաշտում՝ -1...-3°C, Երևանում՝ -3...-5°C:

Մարտի 8-11-ին՝ Գյումրիում և Արթիկում, մարտի 10-11-ին նաև Թալինում և Գորիսում դիտվել է 200-500մ տեսանելիությամբ մառախուղ, Արթիկում և Արարտյան դաշտում դիտվել է ամպրոպ: Առանձին օրեր առանձին շրջաններում դիտվել է քամու ուժգնացում մինչև 14-18մ/վրկ արագությամբ:

Մարտի 14-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունը Արագած լ/ւ-ում կազմում է 210սմ, Ամբերդում՝ 98սմ, Ջերմուկում՝ 88սմ, Հրազդանում՝ 59սմ, Ապարան լճայինում՝ 58սմ, Ամասիայում և Ապարանում՝ 56սմ, Սեմյոնովկայում՝ 54սմ, Աշոցքում՝ 50սմ, Տաշիրում՝ 34սմ, Ճամբարակում, Սևանում և Մասրիկում՝ 21-22սմ, մնացած շրջաններում՝ 1-12սմ: Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում ձյան ծածկը բացակայում է:

Մարտի առաջին տասնօրյակում գիշերային ժամերին դիտված բացասական ջերմաստիճանների հետևանքով Արարատյան դաշտում (օդում՝ -1...-4) պտղատուների վեգետացիան դանդաղել է, որը սկսվել էր փետրվարի երրորդ տասնօրյակում՝ բազմամյա միջին արժեքներից 20-25 օր շուտ: Արարատում և Արտաշատում, որտեղ ծիրանենու բողբոջները թույլ բացված էին, կարող էին որոշ չափով վնասվել:

Մարտի 7-13-ը հանրապետության գետերում ջրի ելքերի բնական էական փոփոխություններ չեն դիտվել, առանձին գետերում դիտվել է ջրի ելքերի փոփոխական ռեժիմ:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում (06.03.22-13.03.2022թթ. տարբերությունը) բարձրացել է 2սմ-ով և կազմել՝ 1900.42մ (13.03.22թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 16 սմ-ով: